ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 22 » մայիս 2025թ, No 3115 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ
ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 47-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N 01/2332-25 առ 19.05.2025թ. փորձագիտական եզրակացությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հաստատել թվով 5 դեղի գրանցման հավաստագրի ժամկետի երկարաձգումը՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝ «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին:

3. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Բաղրյանին՝

1) Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ կետի պահանջների:

2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

5. Դեղի հավաստագրի ժամկետի երկարաձգման ժամկետի (5 տարի) հաշվարկը սկսվում է նախորդ հավաստագրի գործողության ժամկետը լրանալու հաջորդող օրվանից:

Recoverable Signature

X

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2025 թվականի մայիսի «22 » - ի N3115 - Ա հրամանի

Գրանցման հավաստագրի ժամկետի երկարաձգման դեղերի ցանկ համաձայն ՀՀ կառավարության N 162-Ն առ 28.02.2019 որոշման

ՀՀ	Առևտրային անվանումը	Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը	Դեղաձևը	Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը	Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր)	երկիր	Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր)	երկիր	Բաց թողնման կարգավիճակը	եզրակացության համար և ամսաթիվ	Հավաստագրի գործողության ժամկետը լրանալու օրը
1	Ստրեպսիլս ինտենսիվ	ֆլուրբիպրոֆեն	լոզաններ մեղրի և կիտրոնի համով	8,75մգ; (24/3x8/) բլիստերում	Ռեկիտ Բենկիզեր ՀելթՔեյր Ինտերնեյշընլ ՍՊԸ, Նոթինգեմ սայտ, Թեյն Ռոուդ, Նոթինգեմ, Նոթինգեմշիր, ՆԳ90 2ԴԲ	Միացյալ Թագավորություն	Ռեկիտ Բենկիզեր ՀելթՔեյր Ինտերնեյշընլ ՍՊԸ, Նոթինգեմ սայտ, Թեյն Ռոուդ, Նոթինգեմ, Նոթինգեմշիր, ՆԳ90 2ԴԲ	Միացյալ Թագավորություն	ԱԴ	23020 16.05.2025	03.12.2025
2	Ստրեպսիլս	դիքլորոբենզիլ սպիրտ, ամիլմետակրեզոլ	լոզաններ մեղրի և կիտրոնի համով	1,2մգ+0,6մգ; (24/2x12/) բլիստերում, (36/3x12/) բլիստերում	Ռեկիտ Բենկիզեր ՀելթՔեյր Ինտերնեյշընլ ՍՊԸ, Նոթինգեմ սայտ, Թեյն Ռոուդ, Նոթինգեմ, Նոթինգեմշիր, ՆԳ90 2ԴԲ	Միացյալ Թագավորություն	Ռեկիտ Բենկիզեր ՀելթՔեյր Ինտերնեյշընլ ՍՊԸ, Նոթինգեմ սայտ, Թեյն Ռոուդ, Նոթինգեմ, Նոթինգեմշիր, ՆԳ90 2ԴԲ	Միացյալ Թագավորություն	ԱԴ	23021 16.05.2025	03.12.2025
3	Էլիդել	պիմեկրոլիմուս	նրբաքսուք արտաքին կիրառման	10մգ/գ; 15գ ալյումինե պարկուճ	ՄԵԴԱ Մանուֆակտուրինգ, Ավենյու ՋՖ Կենեդի, 33700 Մերինյակ	Ֆրանսիա	ՄԵԴԱ Ֆարմա ԳմբՀ & Քո. ԿԳ, Բենզշտրասե 1, 61352 Բադ Հոմբուրգ	Գերմանիա	Դ	23022 16.05.2025	04.08.2025
4	Ֆլուկոնազոլ	ֆլուկոնազոլ	դեղապատիճներ	150մգ; (10/1x10/) բլիստերում	Արփիմեդ ՍՊԸ, Կոտայքի մարզ, 2204, ք. Աբովյան, 2-րդ միկրոշրջան, շենք 19	Հայաստանի Հանրապետություն	Արփիմեդ ՍՊԸ, Կոտայքի մարզ, 2204, ք. Աբովյան, 2-րդ միկրոշրջան, շենք 19	Հայաստանի Հանրապետություն	Դ	23023 16.05.2025	10.03.2025

5	Լինեքս	լիոֆիլացված կենդանի կաթնաթթվային մանրէներ (Lactobacillus acidophilus, Bifidobacterium infantis, Enterococcus faecium)	դեղապատիճներ կոշտ	1,2x10^7ԳԱՄ; (16/2x8/) բլիստերում	Լեկ Ֆարմասյութիքալս դ.դ., Վերովսկովա փ. 57, 1526 Լյուբլյանա- որակի և բաց թողնման հսկող, Լեկ Ֆարմասյութիքալս դ.դ., Կոլոդվորսկա փ. 27, Մենգեշ, 1234, Սլովենիա- բալք արտադրող, փաթեթավորող	Սլովենիա	Լեկ Ֆարմասյութիքալս դ.դ., Վերովսկովա փ. 57, 1526 Լյուբլյանա	Սլովենիա	ԱԴ	23024 16.05.2025	10.06.2025